


«Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» ՍՊԸ

ՀՀ ք. Գյումրի, Գ.Նժդեհի փող. 2.26 թիվ 21/1

Բջջ. /094/ 70 70 52

09.06.2023թ.



ՀՀ Շիրակի մարզի Գյումրի
համայնքի ղեկավար
Վ.Սամսոնյանին


Համաձայն ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի հետ կնքված համապատասխան պայմանագրի, ներկայացնում ենք կատարված աշխատանքների արդյունքները :

Ք. Գյումրի Շիրակի փողոց թիվ 30/3 հասցեում գտնվող շենքի / անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ՝ 2020285, տրված 08.09.2006թ./ կատարված վերանորոգման, շինարարական, շինարարական մաքրման աշխատանքների ընդհանուր շուկայական արժեքը 09.06.2023թ. դրությամբ կազմում է.

15 000 000

/Տասնհինգ միլիոն / ՀՀ դրամ :

ՏՆՕՐԵՆ՝



Գ.ՊԱՊՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12» դեկտեմբերի 2014 թվականի N 182 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԶԻ (ԳՈՐԿՈՒ) ՓՈՂՈՑԻ N 30 ՀԱՍՑԵԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի գ) և թ) կետերով և նկատի ունենալով «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Անտոնիո Մոնտալտոյի գրավոր խնդրանքը (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի դեկտեմբերի 08-ին թիվ 12813 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական 2020825) Շիրազի (Գորկու) փողոց N 30 հասցեի պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող 434,02 (չորս հարյուր երեսունչորս ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական շինությունը և շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 0,035028(զրո ամբողջ երեսունհինգ հազար քսանութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամին՝ շենքը ամրակայելու, վերականգնելու և մշակութային նպատակներով օգտագործելու համար:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված պատմական և մշակութային արժեք ունեցող հասարակական շինությունը ամրակայել, վերականգնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի № 438 որոշմամբ հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերանորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի համաձայն:

3. Հանձնարարել Գյումրի համայնքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հետ կնքել հուշարձանի պահպանական պարտավորագիր և պարտավորագրի մեկ օրինակը ներկայացնել լիազոր մարմնին:
4. Օրենքով սահմանված կարգով «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ (17)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

Գ.Աղամյան
Ա.Բաղեյան
Ա.Բաղրամյան
Լ.Բարսեղյան
Ա.Գրիգորյան
Վ.Եղիզարյան
Գ.Թաթարյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ.Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ.Փանոսյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

12 դեկտեմբերի 2014թ.
ք.Գյումրի



Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ